«Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ
Հասցե՝ Հանրապետության հրապարակ 4
Հեռ. +374 11 547363
Էլ. հասցե՝
info@historymuseum.am
historymuseum.am@gmail.com

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊՈԱԿ -Ի ԿԱՌՈՒՅՑԻ ԵՏՆԱՄԱՍԻ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՔՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ԿԱԹՍԱՅԱՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտամեթոդական խորհրդի 2021 թ. փետրվարի 25- ին կայացած նիստն ընդունել և հավանություն է տվել Երևան քաղաքի Հանրապետության հրապարակ 4 հասցեում «Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ –ի շենքի ետնամասի պատուհանների քողարկման և կաթսայատան կառուցման նախագծին:

Ներկայացված էսքիզային նախագիծը նախատեսում է նշված հասցեում պատուհանների քողարկում, ինչը հնարավորություն կտա թանգարանային շենքի ջեռուցումն ապահովվելու համար կառուցել կաթսայատուն:

Պատուհանների քողարկման պահանջը բխում է ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի պահանջներից, որն էլ ըստ էության դարձել է հուշարձանի փոփոխման հիմնավորումը: Տեսչական մարմնի պահանջի հիմքը « снип-ii-35-76» նորմի 1. 8 կետն է, ըստ որի՝

Կցված կաթսայատների տեղադրումը շենքի հիմնական ճակատի կողքից չի թույլատրվում Կաթսայատան շենքի պատից մինչև ամենամոտ պատուհանը հեռավորությունը պետք է լինի հորիզոնական առնվազն 4 մ, իսկ կաթսայատան կափարիչից մինչև մոտակա պատուհանը ուղղահայաց առնվազն 8 մ (http://docs.cntd.ru/document/871001218) :

Համաձայն «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի 21- րդ հոդվածի՝ «Հուշարձանի փոփոխումը կատարվում է բացառիկ՝ նրա սկզբնական ու հարմարեցված գործառնական նշանակությամբ օգտագործելու անհնարինության և (կամ) շահագործման նորմատիվային պահանջներին համապատասխանեցնելու դեպքերում: Այս առումով թանգարանի շենքը ներառված է Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում (ՀՀ կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 7-ի N 1616-Ն որոշման հավելված N 1, 1.6/96.2):

Հանրապետության հրապարակ 4 հասցեում գտնվող թանգարանային շենքի հողամասի ընդհանուր չափը կազմում է 0,7663 հա, ըստ նպատակային նշանակության՝ բնակավայրերի, օգտագործման նպատակը՝ թանգարանի զբաղեցրած հողատարածք: Շենքի նպատակային նշանակությունը հասարակական է, օգտագործման նպատակը՝ թանգարան, ընդհանուր մակերեսը կազմում է 6134,1 ք մ, տրված է անհատույց օգտագործման իրավունքով:

Թանգարանը հիմնադրվել է Հայաստանի Առաջին Հանրապետության պառլամենտի օրենքով (N 439, 09.09.1919թ.): Կոչվել է Ազգագրական-մարդաբանական թանգարան-գրադարան: Հետագայում կրել է անվանափոխություններ. Հայաստանի պետական կենտրոնական (1922թ.), Կուլտուր-պատմական (1931թ.), Պատմական (1935թ.), Հայաստանի պատմության պետական թանգարան (1962թ.) և Հայաստանի պատմության թանգարան (2003թ.), կազմավորվել է Կովկասի Հայոց ազգագրական ընկերության, Նոր Նախիջևանի Հայկական հնությունների թանգարանների, Անիի Հնադարանի, Վաղարշապատի Մատենադարանի հավաքածուների հիման վրա (15.289 առարկա): 1935 թվականին ՀԿԿ Կենտկոմի հրամանով մայր թանգարանի հավաքածուների հիման վրա ստեղծվեցին ինքնուրույն թանգարաններ. գեղարվեստական բաժնի հիման վրա (ղեկավար Ռ. Դրամբյան) կազմակերպվեց ՀՍԽՀ Կերպարվեստի թանգարանը (այժմյան՝ Ազգային Պատկերասրահը): Գրական բաժնի հիման վրա ձևավորվեց ՀՍԽՀ Գրական թանգարանը (այժմյան՝ Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանը): Այս երեք թանգարաններն այսօր գործում են նույն հուշարձանային միավորում: Հայաստանի պատմության թանգարանը մասնավորապես գործում է հիմնականում 1916 թ. որպես «Արական գիմնազիայի» շենք կառուցված շենքում (ճարտարապետ՝ Վ. Սիմոնսոն) և դրան հետագաում հավելված հատվածներում: Թանգարանը ֆինանսավորվում է պետության կողմից, որը հավաքածուների և շենքի սեփականատերն է: Հավաքածուները շուրջ 400 000 առարկայից բաղկացած հիմնականում հնագիտական, ազգագրական, դրամագիտական, պատմափաստագրական, հուշային բնույթի ազգային արժեք է: Թանգարանը ներկայացնում է Հայաստանի պատմամշակութային ժառանգության հատընտիր հավաքածու նախապատմական ժամանակներից մինչև մեր օրերը, ցուցադրում է Հայկական լեռնաշխարհում Հին Արևելքի երկրների (Եգիպտոս, Միտանի, Խեթական թագավորություն, Ասորեստան, Իրան, Սելևկյան պետություն, Հռոմ, Բյուզանդիա) մշակութային փոխառնչությունների հազվագյուտ հետքերը: Հավաքածուները ներառում են ամենատարբեր նյութերից պատրաստված նյութական մշակութային ժառանգության մնացորդներ, որոնց պահպանությունը և սերունդներին փոխանցումը պահանջում է համալիր շենքային և տեխնիկական լուծումներ, որոնք տարբեր տարիներին

կառուցված հուշարձան շենքում չափազանց դժվար է ապահովել: Սակայն արդի թանգարանային գործի և պատմամշակութային ժառանգության պահպանության համար համապատասխան պայմանակարգերի պահպանումը անհրաժեշտություն է: Թանգարանում երկար ժամանակ օդափոխանակության, ջերմախոնավային միասնական համակարգերի բացակայությունը և ժամանակվոր լուծումները մեծ վտանգ են ներկայացնում պահպանվող ազգային նշանակության թանգարանային հավաքածուի հետագա պահպանության ապահովման և որոշ դեպքերում դրանց սերունդների համար փրկության գործը:

Այս առումով չափազանց կարևոր էր դեռ անցած տարի պետական ֆինանսավորմամբ «ԲԱՂՐԱՄՅԱՆՇԻՆ» ԲԲԸ-ի կողմից թանգարանում սկսված ջեռուցման և օդափոխության համակարգերի ներդրման շինարարական աշխատանքները: 2020 թվականի նոյեմբերի 17-ին Երևանի քաղաքապետարանից ստանալով նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմվել է նախագիծ: Ըստ նախագծման թույլտվության պահանջների նախագծային փաստաթղթերը պետք է ներկայացվեն նախագծա-նախահաշվային փորձաքննության (ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված N 2) և համաձայնեցվի ՀՀ քաղաքաշինության տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հետ: «Մառա և դուստրեր» ՍՊԸ –ի կողմից նախագիծը անցել է նախագծա-նախահաշվային փորձաքննություն և ստացել դրական եզրակացություն: Համակարգերի կարևոր հատվածների է կաթսայատունը, որը թանգարանի աջ կողմից հարակից է լինելու Հայաստանի Պետական Ֆիլիարմոնիաի շենքին, ձախից՝ Հայաստանի Ազգային Պատկերասրահի շենքին, որի առաջին և երկրորդ հարկերը պատկանում են Հայաստանի պատմության թանգարանին, իսկ ետնամասը՝ Հայաստանի պատմության թանգարանի շենքին:

Բակը, լինելով ընդհանուր օգտագործման տարածք, նշված նախագիծով համաձայնեցվել է Հայաստանի Ազգային Պատկերասրահի և Հայաստանի Պետական Ֆիլիարմոնիաի նեկայացուցիչների հետ: Հայաստանի Պետական Ֆիլիարմոնիաի շենքից կաթսայատունը գտնվելու է 6 մետր հեռավորության վրա, պահպանելով տեխնիկական և հրդեհային անվտանգության նորմը, Հայաստանի պատմության թանգարանի շենքից՝ 3,18 մետր, Հայաստանի Ազգային Պատկերասրահի շենքից 2,5 մետր հեռավորության վրա, երկկողմանի չպահպանելով և խախտելով նորմերը: ՀՀ քաղաքաշինության տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից խնդիր է առաջադրվել փակել խախտվող կողմերի մոտակա պատուհանները (ձախ կողմից 4 պատուհան, որոնց վերևի եզրերը գտնվում են զրոյական նիշից 4,2 մ բարձրության վրա, ետնամասում 1 պատուհան՝ 4,4 մ բարձրության վրա):

Վերը նշված պատուհանները պատկանում են Հայաստանի պատմության թանգարանի հուշարձան շենքի հատվածին: Ետնամասի պատուհանի ետևում գտնվում

է թանգարանի ժամանակավոր ցուցադրության սրահը, իսկ ձախ կողմի պատուհանների ետևում գտնվում է դահլիճը: Արտաքին լուսավորությունը խոչնդոտ է հանդիսանում սրահներում մշակութային արժեքներին լիարժեք լուսավորություն ապահովելու համար, այդ պատճառով շենքի ներսից լուսամուտները ամբողջությամբ փակված են, հետևաբար լուսամուտների արտաքին փակումը որևիցե խնդիր չի առաջացնում թանգարանի առօրյա գործունեության համար:

Թանգարանային շենքի արտաքին և էսթետիկ տեսքը պահելու համար առաջարկվում է պատուհանները փակել միդիս շարվածքով, որը համահունչ է կառույց այլ հատվածների շարվածքին:

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին օրենքի 21-րդ հոդվածով հանրապետական նշանակության հուշարձանների փոփոխումը կարող են կատարվել միայն բացառիկ դեպքերում՝ ՀՀ կառավարության թույլտվությամբ, իսկ հուշարձանների փոփոխման թույլտվություն տրվում է միայն լիազորված մարմնի եզրակացության հիման վրա: Նախքան հուշարձանի փոփոխելը, իսկ անհրաժեշտության դեպքում նաև դրանք կատարելու ընթացքում, լիազորված մարմինը կազմակերպում է հուշարձանի գիտական ուսումնասիրման, չափագրման և լուսանկարման աշխատանքները: Այս առումով Հայաստանի պատմության թանգարանի հետագա շահագործման և դրանում պահպանվող բացառիկ հավաքածուների անվտանգության ապահովումը կարծում ենք բացառիկ դեպքերի շարքում կարելի է դիտարկել, քանի որ արդիական ջերմախոնավային համակարգի և դրա բաղկացուցիչների տեղադրումը թույլ կտա կորստից փրկել պետական սեփականություն համարվող ազգային նշանակության հավաքածուն: Կատարված ուսումնասիրությունները և առաջարկվող լուծումները ելնում են հանրապետական նշանակության հուշարձանի ամբողջականության պահպանման, հակահրդեհային անվտանգության, կառույցի շահագործման բարելավման հրատապ խնդիրներից: Պետական սուղ ֆինանսական միջոցների հաշվին թանգարանային հավաքածուների պահպանման խնդրի կարևորումը և լուծումը ևս կարևոր է հուշարձանի հետագա շահագործման նպատակով առաջարկվող փոփոխություններին գնալը:

Հարգանքով՝

«Հայաստանի պատմության թնգարան» ՊՈԱԿ-ի տնօրեն Դավիթ Պողոսյան